ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

16 հունիսի 2017 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/1Ա
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 62 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի գլխավոր խորհրդականը, քաղաքապետի խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալները, աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը ներկայացրեց Երևանի ավագանու առաջին նստաշրջանի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսանում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը.

1) Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակելու մասին.
2) Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին.
3) Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին.
4) Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին.
5) Երևան քաղաքում «Արգենտինայի Հանրապետության հրապարակ» անվանակոչելու մասին.
6) Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 648-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին.
7) Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ –** Կ. Արեյանին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակելու մասին։

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցերի համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Հայկ Պետրոսյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
3. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը։

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Կ. Արեյանին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սոննա Աղեկյան – Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Սոննա Աղեկյան – Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու անդամ Կամո Արեյանին նշանակել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 12

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. **ԼՍԵՑԻՆ –** Վ. Նիկոյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին։

Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցերի համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Հասմիկ Սարգսյան - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ
3. Դավիթ Խաժակյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար
4. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածու Վ. Նիկոյանը։

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Վ. Նիկոյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

2. Սմբատ Լպուտյան - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

3. Դավիթ Խաժակյան – Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

4. Զարուհի Փոստանջյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Վահե Նիկոյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 57, դեմ՝ 5, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. **ԼՍԵՑԻՆ –** Դ. Օհանյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:

Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցերի համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Սերգեյ Ղահրամանյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
3. Ալինա Քուշկյան - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը և Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածու Դ. Օհանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Դ. Օհանյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
3. Ալինա Քուշկյան - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Դավիթ Օհանյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 61 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 5, ձեռնպահ՝11

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. **ԼՍԵՑԻՆ –** Ա. Սուքիասյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:

Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցերի համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Հայկ Պետրոսյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
3. Անահիտ Բախշյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
4. Սերգեյ Ղահրամանյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածու Ա. Սուքիասյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ե. Ազարյանը տեղեկացրեց, որ «Ա. Սուքիասյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
2. Դավիթ Խաժակյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար
3. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Ամփոփիչ ելույթի համար ձայնը տրվեց Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածու Ա. Սուքիասյանին։

ՈՐՈՇՎԵՑ – 1. Արամ Սուքիասյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 12

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքում «Արգենտինայի Հանրապետության հրապարակ» անվանակոչելու մասին։

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Անի Խաչատրյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը։

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ա. Հարությունյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում «Արգենտինայի Հանրապետության հրապարակ» անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Արայիկ Հարությունյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ, ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
2. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Ամփոփիչ ելույթի համար ձայնը տրվեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանին։

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Սայաթ-Նովայի պողոտայի և Չարենցի փողոցի հատման մասում ձևավորված հրապարակն անվանակոչել «Արգենտինայի Հանրապետության հրապարակ»։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 62, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

6. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 648-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին։

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցերի համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Անահիտ Բախշյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
2. Տիգրան Ավինյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
3. Արայիկ Հարությունյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
4. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 648-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Անահիտ Բախշյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
2. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
3. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Ամփոփիչ ելույթի համար ձայնը տրվեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2017 թվականի ծրագրի վերաբերյալ» N 648-Ն որոշման հավելվածը լրացնել VI-րդ գլխով՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 62 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 17, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

7. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը:

Հիմք ընդունելով Երևանի ավագանու կանոնակարգի 104-րդ կետը՝ Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը ժամը 13:00-14:00-ը հայտարարեց ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցերի համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Արայիկ Հարությունյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
2. Հայկ Պետրոսյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
3. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
4. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը և Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի

քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Արայիկ Հարությունյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
2. Դավիթ Խաժակյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար
3. Թեհմինա Վարդանյան - Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ
4. Սոննա Աղեկյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
5. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ
6. Կամո Արեյան - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ

Ամփոփիչ ելույթի համար ձայնը տրվեց Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանին։

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել՝

1) Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 10-Ա որոշման 1-ին կետը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 61 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 16, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Կազմեց՝
Ն. Ղուկասյան